համաձայնութեամբ խոստացան օժանդակել դպրոցին ի տարին 400 ռուբլի դրամօք՝ որ ընդ տարեկան մտից լիցի 1200 ռուբլի ի բաւականութիւն երից ուսուցչաց։ Ի Դարբանդ փոքրիկ ծովեղերեայ քաղաքի գտանին հայք 150 տուն, որք պարապին վաճառականութեամբ և այգեգործութեամբ, ունին զմի քահանայ յարմար ուսմամբն և համեստութեամբն եկեղեցւոյն և ժողովրդեանն, որ ի քանի ամս ձրի ուսուցչութեամբն ծառայէր ի դպրոցին. արժանի է Հայրապետական շնորհաց և վարձատրութեան։ Ի Դարբանդայ վերադարձեալ և զմատուռն նահատակութեան սրբոյն Գրիգորիսի Աղուանից Կաթուղիկոսի համբուրեալ՝ զոր ի նորոյ յամին 1879 շինեալ է Դարբանդցի հանդուցեալ Կաճկաճեան բարեպաշտ իշխանի տիկին Եղիսաբէթն, անցի վերադառնալ ի Ղուբայ, և ի ճանապարհին ողորմութեամբն Աստուծոյ ազատեալ յաւազակաց՝ հասի արքունի զօրանոցն Դաղըստանի (Գուսար անուանեալ) որ ի ճանապարհին. ուր և տեսանելով զքանի հայ զօրապետս և զօրավարս և զվաճառականս անցեալ գնացի ի միւսում աւուրն Ղուբայ, ուր և աւուրս ինչ մնալով վերադարձայ ի Բաղու քաղաքն, և անտի յետ աւուրց ի Շամախի։

Ի գաւառին Ղուբայի յանտառամէջս երկու հայաբնակ գիւղօրայք գտանին Խաշմաս 30 տուն և Քիլվար 100 տուն, յորս մեծ դժուարութեամբ գնալով տեսի զթաթախոս ժողովուրդս և միսիթարեցի, յորոց Խաշմասեցիք կային ի մեծի նեղութեան յերեսաց աւազակաց։ Ուստի և խնդրեցի զօժանդակութիւն գաւառապետին Ղուբայի»։

Շմոռանամ ասել, որ Դարբանդը որպէս զարդարուած է ծառաստանօք և պարտիզօք և ծաղկանոցօք, նոյնպէս և մեծամեծ այգիներով՝ որ սկսվում է քաղաքի մօտիցն լեռան ստորոտիցն մինչեւ ծովի մօտերն լայնութեամբ, իսկ երկայնութեամբ մինչեւ 15 վերստ տարածութեամբ՝ արքունի ճանապարհի ուղղութեամբն։ Դարբանդի այգիքը բացի առատ խաղողից՝ տալիս են և առատ նուշ, ըստ որում ինչպէս Երեւան և Նախիջեւան այգւոյ միջնակներումն և շրջանակներումն դեղձի ծառեր են զը-